

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Հարգելի դիմորդ

«Մաթեմատիկա» առարկայի ընդունելության թեստը բաղկացած է 20 առաջադրանքից:

1–15 առաջադրանքներում լուծումները ներկայացնելը պարտադիր չէ: Դրանք նպատակաուղղված են աշակերտների հենքային գիտելիքների ստուգմանը, որոնք համապատասխանում են հանրակրթական դպրոցի ծրագրի նվազագույն պահանջներին:

16 - 20-ը ընդարձակ լուծում պահանջող առաջադրանքներ են, որոնց կատարումը պահանջում է մաթեմատիկայի տարբեր բաժիններից ունեցած գիտելիքների կիրառում: Դրանց համար պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքն առաջադրանքից հետո՝ նշված տեղում:

1 – 15 առաջադրանքից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

16 – 20 առաջադրանքից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 4 միավոր:

Թեստի առավելագույն գնահատականը 50 միավորն է:

Թեստի առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 120 րոպե:

Մաղթում ենք հաջողություն

Մաս I (1-15).

1. Գտնել 20-ից փոքր բոլոր կենտ երկնիշ թվերի գումարը:

Պատ.՝

2. Ամենափոքր եռանիշ թիվը 17-ի բաժանելուց հետո մնացորդում ստացվում է 10:
Գտնել այդ թիվը:

Պատ.՝


3. Քանիսով է ամենափոքր քառանիշ թիվը մեծ ամենամեծ երկնիշ թվից:

Պատ.՝

4. Ինչ թվով փոխարինենք աստղանիշը որպիսով ստացված $183*4$ քառանիշ թիվը բաժանվի 9-ի:


Պատ.՝

11. Գտնել արտահայտության արժեքը. $\frac{a-1}{2a} \cdot \left(\frac{a+2}{a+1} - \frac{a^2-2}{a^2-1} \right)$, եթե $a = -0,5$



Պատ.՝


12. $\sqrt{4 + 2\sqrt{3}} - \sqrt{4 - 2\sqrt{3}}$



Պատ.՝


(13-14) Լուծել հավասարումները.

13. $\frac{x^2}{6} - \frac{2x}{3} = \frac{3x-10}{4}$



Պատ.՝


19. Առաջին բրիգադը ամբողջ աշխատանքը կարող է կատարել 3 օրում, իսկ երկրորդ բրիգադի հետ համատեղ աշխատելով՝ 2 օրում: Քանի օրում կկատարի այդ նույն աշխատանքը երկրորդ բրիգադն, աշխատելով առանձին:



Պատ.՝

20. Լուծել համակարգը

$$\begin{cases} \frac{x+y}{2} - \frac{x-y}{3} = 8 \\ \frac{x+3}{3} + \frac{x-y}{4} = 11 \end{cases}$$



Պատ.՝